

# ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՑԱՆ ԱԹԵՒԶՄԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

## Հ. Ա. ՀԱՐՈՅԱՆ

Գիտաբեկստական աշխարհայացքի կենսահաստատ, մարդասիրական և բարոյական էության բացահայտումը աթեկստական պրոպագանդայի հիմնական խնդիրներից է, որն առավել արդիական է դառնում այսօր՝ «հոգեբանական պատերազմի» պայմաններում, երբ պայքար է ֆուում «մարդկանց մտքերի, նրանց աշխարհը մրոնման, նրանց կենսական, սոցիալական և հոգեու կողմնորոշչիների համար»<sup>1</sup>: Նպատակ ունենալով հեղինակագործել սոցիալիստական գաղափարախոսությունը, վարկաբեկել գիտաբեկստական աշխարհայացքը ժողովրդական զանգվածների աշքում՝ արևմուտքի հակակոմունիստական և հակախորհրդային կենսարուններ, մասնավորապես կղերական հակակոմունիզմը, աշխատում են ծուռ հայելու մեջ ներկայացնել, ամեն կերպ աղավաղել կրոնի, եկեղեցու և հավատացյալների դրությունը սոցիալիզմի պայմաններում, նենգափոխել մարքսիստական աթեկզմի իրական բովանդակությունն ու նշանակությունը: Ընդ որում, քարոզվում է, թե աթեկզմն առնասարակ զուրկ է դրական արժեքից, որ այն հոգնոր, «անոնմալիայի», անձնավորության «ոչ լիարժեքության» արտահայտություն է, ավելին, որ, իրը, հոգնոր-բարոյական արժեքները, այդ թիւում և մարդկային հավատը մերժող ուսմունք է: Մյուս կողմից աթեկզմի, գիտական աշխարհայացքի էության միակողմանի, մակերեսային ըմբռնման ու մեկնաբանման միտում է նկատվում նաև առօրեական գիտակցության մեջ (որի կրողները ոչ միայն հավատացյալներն են, այլև՝ ոչ հավատացյալները):

Բանն այն է, որ մեր օրերում արժեքների վերարժեքավորման, կարծիքների սոցիալիստական բազմազանության (պլյուրալիզմի) զարգացման պայմաններում հասարակական գիտակցության, հատկապես երիտասարդության մեջ առաջացել է աշխարհայացքային շփոթ: Հասարակական զարգացման շրջադարձային, բեկումնային փոկերին բնորոշ նման իրավիճակը որքան որ օրինաշափ է, նույնքան էլ հակասական:

Այսպես, աղավաղված սոցիալիզմից, ձևախախտված սոցիալիստական հարաբերություններից հրաժարվելու և իսկական սոցիալիզմին անհարիր կեղծ արժեքները ժխտելու միանգամայն օրինաշափ ու անհրաժեշտ գործընթացը, ցավոր, առանձին դեպքերում չի ուղեկցվում դրա դիալեկտիկական արժեքավորմամբ: Մասնավորապես աթեկստական շարժումը վերարժեքավորելիս ամենից առաջ հարկ է հիշել, որ սոցիալիզմից կատարված շեղումները, մարքսլենինյան դիալեկտիկական հեղափոխական ուսմունքի դոգմատիզացումն անպայմանորեն իր ցավագին դրսեորումներն ու բացասական անդրադարձումներն ունեցավ նաև կրոնի, եկեղեցու ու հավատացյալների հանդեպ կուսակ-

<sup>1</sup> ԽՄԿ ՀՀՎՀ Համագումարի նյութերը, Եր., 1986, էջ 123.

ցության և պետության վերաբերմունքի վրա: Երկրորդ, հարկավոր է տարբերել աթեփզմը՝ որպես գաղափարական շարժում, որպես փիլիսոփայական աշխարհայացքային ուսմունք, իսուսափել այն քաղաքական դոկտրինայի վերածելուց (որը և կատարվեց անձի պաշտամունքի ու լճացման տարիներին):

Աշխարհայացքային աթեփստական դաստիարակության մեջ տեղ գտած լուրջ թերություններից մեկն էլ այն է, որ հաճախ կրոնի քննադատությունը և աթեփզմի պրոպագանդան եղել է ինքնանպատակ: Կրոնական գաղափարախոսության հետադիմական բնույթի բացահայտումը միշտ չէ, որ մեզանում ուղեկցվել է որոշ համակողմանի՝ փիլիսոփայական, բարոյական, քննադատական քննադատությամբ, նրա՝ որպես սոցիալ-իմացաբանական, մշակութային բարդ երևույթի, որպես աշխարհայացքային ուսմունքի յուրահատկության վերլուծությամբ: Այլ կերպ ասած, տիրապետող է եղել ոչ թե կրոնի՝ որպես սոցիալ-մշակութային երևույթի գիտական արժեքավորումը, մեր հասարակարգում նրա գոյության պատճառների վերհանումը, այլ կրոնի մերկ, հախուռն ծխտումը: Նման միակողմանի մոտեցումը հանգեցրել է ինչպես կրոնի, այնպես էլ աթեփզմի՝ որպես փիլիսոփայական-աշխարհայացքային ուսմունքի ոչ ճիշտ, մակերեսային ըմբռնմանն ու մեկնարանմանը:

Հենց այս հանգամանքներով էլ պայմանավորված է մարգս-լենինյան աթեփզմի՝ որպես աշխարհայացքային ուսմունքի, մարդասիրական կենսահաստատ բնույթի վերլուծության անհամարեցներությունը, որը և ըստ էության ունի թե՛ տեսական-հակապրոպագանդիստական և թե՛ գործնական-դաստիարակչական նշանակություն:

Նախապես նշենք, որ աթեփզմի թյուրըմբռնման գիմավոր պատճառներից մեկը (որը, ի դեպ, կրոնա-աստվածաբանական շարաշահումների օբյեկտիվ հիմքն է) հավատ և կրոնական հավատ, մարդկային հոգեոր-բարոյական ու կրոնա-պատրանքային արժեքներ հասկացությունների նույնացումն է, դրանց որակական տարրերությունների անտեսումը: Իրականում մարգս-լենինյան աթեփզմը ոչ թե հավատի, հոգևոր արժեքների, այլ դրանց կրոնա-միստիկական մեկնարանման ծխտում է, այն է՝ մարդու գիտակցությունը, նրա հոգեոր-բարոյական աշխարհը, հավատի զգացումը գերբնական, պատրանքային ուղղվածությունից ազատելու, մարդու և հասարակության համար հոգեոր-աշխարհայացքային արժեքների իրական բնույթին ու նշանակությունը բացահայտող ուսմունք: Ուստի և անհիմն է աթեփզմի էությունը հանգեցնել միայն կրոնի, առավել ևս մարդկային հավատի սոսկ բացասմանը: Մարգս-սիստական աթեփզմում կրոնի բննադատական վերլուծությունը, նրա տեսական սնանկության բացահայտումը ոչ թե նպատակ է, այլ միջոց՝ կեղծ աշխարհայացքը, պատրանքային գիտակցությունը ճշմարիտ աշխարհայացքով և իրական գիտակցությամբ փոխարինելու համար: Գիտական աթեփզմը քարոզում է գիտակցական հավատ՝ աշխարհի, մարդու, իրականության ռեալ գոյության, բանականության ուժի և հնարավորությունների հանդեպ: Դեռևս իր ժամանակին Ֆ. Էնգելսը նախագուշացքը է աթեփզմը հավատի ուղղակի հակադրություն հոշակելու փորձերի վնասակարության մատին բռն աթեփստական շարժման համար: Նա գրել է. «Մի բան անկասկած է. միակ ծառայությունը, որ մեր ժամանակում դեռ կարելի է մատուցել աստծուն, դա այն է, որ աթեփզմը հայտարարեն հավատի հարկադրական խորհրդանիշ...»<sup>2</sup>:

Իրոք, անհնար է ու անհեթեթ մերժել այն, ինչ օբյեկտիվորեն գոյություն ունի: Իսկ հավատը, դա մարդու բնական, հոգեոր կարեռագույն որակներից, զգացմունքներից մեկն է, որը համոզմունքների և որոշակի գաղափարների

<sup>2</sup> Ֆ. Էնգելս, Կ. Մարքս, Վ. Ի. Լենին, Կրոնի մասին, Եր., 1977 թ., էջ 284.

Հետ մեկտեղ կազմում է աշխարհայացքի բովանդակությունը, Ընդ որում, հավատը առանձնակի տեղ ու դեր ունի աշխարհայացքային համակարգում: Հիրավի, մարդն առանց հավատի չի կարող ապրել: Այն ընկած է մարդկացին գործունեության հիմքում և, ընդհանրապես, ոչ մի լավ բան չի ստեղծվում առանց հավատի: Հավատն է, որ կենսունակ է դարձնում աշխարհայացքը, այն է՝ իրականության, աշխարհի ընդհանուր և ամբողջական ընկալումը, դրանով իսկ ապահովում մարդու հավասարակշռված կենսագործունեությունը: Առհասարակ, եթե հավատը թեկուղն մի վայրկյան լքի մարդուն, ապա դրա հիմանի հուսալրությունը, հոգեոր բայցայումը, աշխարհայացքային ճգնաժամը, որը տանում է մարդկային արժեքների մերժման, բարոյական արգելվների ու շափանիշների վերացման:

Այսպես ուրեմն, աթեհզմի՝ որպես աշխարհայացքային ուսմունքի նըպատակն է ազատել հավատի զգացմունքը, մարդկային հոգեոր այդ արժեքը կրոնա-միստիկական բողից, գերբնական ուղղվածությունից և վերադարձնել մարդուն որպես իր սեփականը, իրենը:

Աթեհզմը հաստատում է հավատը մարդու՝ որպես ինքնուրույն, անկախ, ազատ, հզոր էակի հանդեպ, դրանով իսկ նրան տալիս է իր իրական կեցության և կոչման գիտակցությունը: «Կրոնի ըննադատությունը մարդուն ազատագրում է պատրանքներից, — գրել է Կ. Մարքսը, — որպեսզի նա մտածի, գործի, իր իրականությունը կառուցի որպես պատրանքներից ազատագրված, բանական դարձած մարդ, որպեսզի նա պտտվի իր շուրջը և իր իրական արեգակի շուրջը»<sup>3</sup>: Աթեհստական արժեքների յուրացումը օգնում է մարդուն վերագտնելու ինքն իրեն որպես ինքնուրույն էակի, այն դեպքում, երբ կրոնը՝ որպես «հոգեոր ինքնամայացման մի ակտ» (Ֆ. Էնգելս), զրկում է մարդուն ներքին դրական բովանդակություննից: Աթեհզմը մարդու ուսաւ ինքնագագողությունը: Աթեհստական գիտակցությունը անձնավորությանը կողմնորոշում է ոչ թե դեպի պատրանքները, այլ իրական աշխարհ՝ ուսաւ կյանքը: Այս հատկանիշներով էլ հենց աթեհզմը ներկայանում է որպես կոնկրետ, ճշմարիտ մարդասիրության կրող: «Աթեհզմը հումանիզմ՝ իրենով իսկ միջնորդավորված՝ կրոնի վերացման ճանապարհով»<sup>4</sup>: Կրոնի վերացական մարդասիրությանը աթեհզմը հակադրում է գործնական դրական մարդասիրություն, քանզի առաջադրում և պաշտպանում է իրական մարդկային կրանքի պահանջ՝ վերափոխել աշխարհը և ստեղծել մարդու գոյության համար արժանի պարմաները: Առանց այդ հատկանիշի աթեհզմն ինքը կմնա զուտ տեսական մակարդակի վրա և, Ֆ. Էնգելսի խոսքերով ասած, հրավասարվի կրոնին: Իրոք, «աթեհզմը որպես աստծու բացասում, նշանակում է տեսական մարդասիրության ձեւավորում, կոմունիզմը որպես մասնավոր սեփականության վերացում նշանակում է իրոք մարդկային կյանքի՝ որպես մարդու անկապտելի սեփականություն, պահանջ, նշանակում է գործնական հումանիզմի հաստատում»<sup>5</sup>: Ահա թե ինչու աթեհզմը, եթե կտրված է սոցիալիզմի և կոմունիզմի հասարակական պրակտիկայից, մարքս-լենինյան ուսմունքից՝ որպես ամբողջական գիտական հեղափոխական աշխարհայացքից, վերածվում է դատարկ, մերկ քարոզչության, կորցնում իր կոնկրետ դրական բովանդակությունը, ավելին, ձեռք բերում բացասական արժեքը և նշանակություն: Իրականում աթեհզմը՝ որպես աշխարհայացքային ուսմունք, ներթափանցված է կենսահաստատ, մարդասիրական

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 14:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 487:

<sup>5</sup> Նույն տեղում:

էությամբ, որը, ամենից առաջ, դրսկորվում է նրա՝ որպես սոցիալական երևույթի, մարդկության հոգեոր առաջընթացի օրինաշափ արդյունք լինելու մեջ: Աթեհզմը՝ որպես հոգեոր-գաղափարական շարժում, որպես համակարգված գաղափարների ամբողջություն, գոյություն է ունեցել մինչմարքսիստական փիլիսոփայական (թե՛ մատերիալիստական և թե՛ իդեալիստական) ուսմունքներում: Ծագելով ու զարգանալով մարդկային հասարակության բնության և սոցիալական կույր տարերային ուժերի ճնշումից ազատագրվելու գիտակցական պայքարի պրոցեսում՝ աթեհզմը վերածվում է սոցիալական օրինաշափ երևույթի: Ի սկզբանե հանդես գալով որպես առաջադիմ մտածողության տարր, այն արտահայտել ու պաշտպանել է առաջընթացի, առաջավոր դասակարգերի շահերն ու ձգտումները (ի տարրերություն և ի հակադրություն կրոնի, որն արդարացրել է շահագործումն ու սոցիալական անարդարությունը): Որպես առաջադիմական ուսմունքների բաղադրամաս՝ աթեհզմը դրականնորեն է ազել մարդկության, հոգեոր զարգացման վրա: Աթեհստական մտածեկալերը՝ բողարքված կամ բացահայտ, ներհատուկ է եղել բոլոր ժամանակների առաջադիմ մտածողներին, ժողովրդական զանգվածներին, տվյալ դարաշրջանի հեղափոխական դասակարգերին, որոնք հանդես են եկել մարդու իրական շահերի պաշտպանության, նրա ազատ զարգացման օգտին: Քննադատելով կրոնն ու կրոնական գաղափարախոսությունը, դատապարտելով ու մերժելով սոցիալական և հոգեոր ճնշման բոլոր ձեւերը, ծառանալով սոցիալական անարդարության դեմ, աթեհզմը նպաստել է դասակարգային գիտակցության աճին: Այս առումով աթեհզմն առաջադիմության սոսկական արդյունք չէ, այլ միաժամանակ նաև գործոն է: Աթեհզմն արտահայտում է մարդու իշխանության աճը արտաքին, տարերային, անծանոթ ու ճնշող ուժերի նկատմամբ: Եվ որքան մարդն ավելի է ազատագրում իրեն բնական և հասարակական (հոգեոր) ուժերի ալղ ճնշումից, տիրապետում և ենթարկում դրանք իր շահերին ու պահանջմունքներին, այնքան ավելի են զարգանում աթեհստական գաղափարները, մեծանում գիտամտերիալիստական մտածելակերպին անցնելու հնարավորությունը: Ուստի և աթեհզմն անմիջականորեն կապված է մարդկային իմացության, գիտության զարգացման հետ: Սակայն գիտական աշխարհայացքի, ալղ թվում և աթեհստական մտածելակերպի ձեվավորման գործընթացը նույնպես բարդ է և հակասական, որը զուտ գիտական գիտելիքի (բնագիտության) կամ փիլիսոփայության զարգացմանը հանգեցնելը կնշանակի ընկնել միակողմանիության մեջ, շհասկանալ նրա էությունն ու զարգացման յուրահատկությունը: Աթեհզմի հաստատման համար բավարար չէ բնագիտության ինքնին զարգացումը: Գիտական գիտելիքի զարգացումը, կտրված մարդու ինքնաճանաշման և ինքնահաստատման մյուս՝ փիլիսոփայական, բարոյական, գեղագիտական ձեւերից, կորցնում է իր աշխարհայացքային դրական արժեքն ու ուղղվածությունը: Եվ միայն դրանց դիալեկտիկական միասնությունն է տալիս ինչպես մարդկային գոյության, այնպես էլ աշխարհայացքի ամբողջության գիտակցությունը: Ուստի և բնության իմացության խորացումը, մարդու իշխանության աճը բնության վրա համապատասխանաբար պետք է ուղեկցվի սոցիալական շարժման գիտական կառավարումով, հասարակական երևույթների իմացության խորացումով և ձեռք բերված գիտելիքների մարդասիրական կիրառումով:

Հիմնվելով գիտական իմացության նվաճումների, բանականության ձեռքբերումների վրա՝ աթեհզմն օգնում է մարդուն մեծացնելու իր ազատության աստիճանը, հաղթահարելու բացարձակ կախվածությունը բնության և սոցիալական ուժերից: Այսպիսվ, սկզբից ևեթ ծագելով որպես կրոնի հա-

կոտնյա՝ աթեիզմը պայքարել է սոցիալական անարդարության դեմ՝ հանուն մարդու ազատ զարգացման:

Իր ուսմունքը կառուցելով հասարակության (բնության) օրյեկտիվ չորհնքների ճանաչողության վրա՝ աթեիզմը մարդուն դիտում է որպես պատմության սուբյեկտ (և ոչ թե օբյեկտ, ինչպես կրոնի մեջ), պատմության կերպող, որպես հասարակական շարժման գլխավոր շարժիչ ուժ։ Մարդիկ, ժողովուրդները իրենք են ստեղծում իրենց պատմությունը՝ բանական գործունեության նպատակալաց պայքարի, սեփական ուժերի գործադրման միջոցով։ Աթեիզմը տալիս է կյանքի և նրա իմաստի իրական գիտակցությունը, պահանջներով մարդուց կյանքի իմաստը որոնել բուն աշխատանքային գործունեության, նյութական և հոգեոր արժեքները բազմապատկելու, էական, մարդկային ձգտումների իրական բավարարման մեջ։

Մարքսիստական աթեիզմը ենում է նրանից, որ անհատի, հասարակության հոգեոր զարգացման օրինաչափություններից մեկը (որը, ի դեպ, այսօր պետք է խստագույնս հաշվի առնվի դաստիարակչական աշխատանքի ընթացքում) այն է, որ եթե մարդու հոգեոր օրյեկտիվ պահանջմունքները իրական բավարարվածություն չեն ստանում, և մարդու էության զարգացումը չի դրվում ճշմարիտ, մարդասիրական, բնական հոնի մեջ, ապա այդ իրական պահանջմունքների անբավարարվածությունը միշտ էլ ծնում է իր սուսոգատները՝ ի դեմք կրոնի։

Աթեիզմը սկզբունքային ճիշտ, մարդասիրական լուծում է տալիս աշխարհայցքային հիմնական հարցին՝ մարդկային կեցության գլխավոր հակասությանը՝ գոյության և էության փոխհարաբերությանը։ Ելնելով մարդու կեցության ամբողջականության, էության և գոյության դիալեկտիկական միասնության դրույթից, մարքսիստական աթեիզմը պրոբլեմը վճռում է հօգուտ մարդու էական գոյության։ Իրականում մարդու կեցությունը նրա գոյության և էության նյութական ու հոգեոր կողմերի ներքին միասնությունն է, հետևապես դրանց անշատումը (առավել ևս՝ հակադրումը միմյանց, ինչպես դա կատարվում է կրոնական աշխարհայցքում) ոչ թե լուծում է կեցության հակասությունը, այլ ավելի է խորացնում այն՝ հանգեցնելով կողմերից մեկի բացառմանը կամ զբարերմանը։ Ի հակադրություն կրոնի, աշխարհի գիտական բացատրությունն ու յուրացումը կատարվում է նրանում գոյություն ունեցող հակասությունների, օրենքների, ճանաշման և այդ հիմքի վրա՝ կյանքի իրական իդեալների ու նպատակների հաստատման միջոցով։ Գիտական աշխարհայցքը տալիս է կյանքի իմաստի իրական ըմբռնումը՝ պահանջելով մարդուց որոնել այն բուն կյանքի, աշխատանքային գործունեության, նյութական և հոգեոր արժեքներ ստեղծելու իր էական ձգտումների իրական (և ոչ թե պատրանքային) բավարարման համար մղվող գիտակցական պայքարի մեջ։ Հետևապես որքան հարուստ ու բազմակողմանի է մարդու իրական կեցությունը, որքան ավելի լրիվությամբ է նա օրյեկտիվացնում, առարկայացնում իր ներքին էներգիան՝ հոգեոր ու մարմնական ուժերը, այնքան ավելի իմաստավորված ու բովանդակալից է մարդու կյանքը։ Նշանակում է, աթեիզմի հիմնական պահանջներից մեկը հետևյալն է. ակտիվորեն մասնակցել հասարակական կյանքին, վեհ ու ազնիվ իդեալների համար մղվող պայքարին։

Գիտաաթեիստական աշխարհայցքի սոցիալ-բարոյական արժեքն էլ հենց այն է, որ օֆում է մարդուն գիտակցելու իր սոցիալական էությունը, իր կենսական, ուել շահերը և գործելու դրանց համապատասխան։ Աթեիզմը մատնադրուց է անում ինքնահաստատման և ինքնահրականացման ուել ուղին, տալիս է մարդուն ներհատուկ ուժերի և հնարավորությունների օրյեկտիվացման ու զարգացման հիմնական միջոցների գիտակցությունը, այն է՝

աշխարհի և մարդու մասին հիմնարար գիտելիքների զարգացումն ու յուրացումը: Մերժելով կրոնի ջատագով մարդու վերացական-օտարված էության պաշտամունքը, աթեիզմը քարոզում է կոնկրետ գործնական մարդու էության պաշտամունք՝ որպես կենսագործունեության մեջ, հասարակական պայմաններում դրսեռորդող, զարգացող էություն: Աթեիզմի ելակետը իրական, կենսագործող, պայքարող, բանական մարդն է, նրա ոեալ շահերն ու պահանջները: Իսկ մարդու էությունը՝ որպես հասարակական հարաբերությունների ամբողջություն, նրա հոգեոր արժեքները, զգացմունքներն ու պահանջմունքները զարգանում են միայն գոյության պայմանների կատարելագործման դեպքում: Այստեղից էլ աթեիզմի նպատակը՝ մարդու վերափոխիչ, բանական ու արդարացի գործունեության, հասարակական հարաբերությունների հեղափոխական վերակառուցման միջոցով երկրի վրա հաստատել նրա էությանը համապատասխանող պայմաններ: Գիտամատերիալիստական աշխարհայացքում սոցիալական առաջադիմության շափանիշը մարդն է, նրա ազատ և անկաշկանդ զարգացումը: Կրոնի մեջ բարձրագույն արժեքը աստվածն է, գերբնական էակը, որից և ածանցվում են մարդկային արժեքները: Մինչդեռ մարքսիստական աթեիզմը մեծագույն արժեքը դիտում է մարդուն, նրա համակողմանի ու ներդաշնակ զարգացումը համարում պատմական գործընթացի իմաստը:

«Կրոնի բննադատությունը,— գրել է Կ. Մարքսը, — ավարտվում է մի ուսմունքով, որտեղ մարդու համար բարձրագույն արժեքը մարդն է, ավարտվում է, հետևաբար, կատեգորիկ իմացերատիվով, հրամայականով՝ տապալելու բոլոր այն հարաբերությունները, որոնցում մարդը ստորացված, ճնշված, անօգնական, արհամարհված էակ է»<sup>6</sup>:

Աթեիզմի դրական բովանդակությունն իր կոնկրետ արտացոլումն է գրտնում նաև մարդկային բարոյական նորմերն ու արժեքները կրոնա-միստիկական գունավորումից ազատելու և դրանց ճշմարիտ բնույթն ու նշանակությունը բացահայտելու մեջ: Բարոյականության կրոնական ըմբռնումն ու մեկնաբանումը աղավաղում է նրա սոցիալական, իտկան մարդկային ժագումն ու էությունը: Կրոնաբարոյական արժեքների հիմքում ընկած է կույր հավատը աստուծո՞ որպես բարոյականության բարձրագույն մարմնավորման, հանդեպ, որից և ածանցվում է մարդկային բարոյականությունը: Այսինքն, կրոնի մեջ հոգեոր բարոյական արժեքները, կտրվելով և օտարվելով մարդուց ու հասարակությունից, վերածնվում են ինքնարավ գոյության, կախման մեջ դրվում գերբնական էությունից:

Կրոնի առաջին խոսքն արդեն կեղծ է, գրել է Ֆ. Էնգելսը, որովհետև «սկսում է նրանից, որ ցույց տալով մեզ ինչ-որ մարդկային բան, ներկայացնում է այն որպես կերպնական, աստվածային»<sup>7</sup>:

Յուրացնելով համամարդկային բարոյական արժեքները՝ կրոնը դրանով հազնում է մառադասիրական գգիստ: Իրականում զուտ հոգեոր-վերացական, թեկուզ և համբաժնանուր շահերի վրա հիմնված մարդասիրությունը ընդամենը մարդասիրության ստվերն է: Կոնկրետ մարդասիրությունը, որը և բարում է աթեիզմը, հիմնվում է իրական ճշմարտության վրա:

Մարքսիստական աթեիզմը ձևամորում է բարոյական բարձր գիտակցություն, որի անհրաժեշտ բաղադրամասն է կազմում բարձրագույն նպատակի գիտակցումը, այն է՝ իդեալը: Մարդու հոգեոր գիտակցական նպատակալար գործունեությունն անհնար է առանց իդեալի հստակ գիտակցման: Ի-

<sup>6</sup> Կ. Մարքս. Փ. Թիգելիս. Ըստ., թ. 1, ստ. 422.

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 591:

դեալ ունենալու մարդու հոգեսր աշխարհայացքային պահանջմունքը կրոնում նույնպես աղճատված է ներկայանում։ Այո, կրոնը մարդուն տալիս է իդեալ ։ «Մարդուն իդեալ է պետք, — գրել է Վ. Ի. Լենինը, — բայց բնությանը համապատասխանող, մարդկային իդեալ և ոչ թե գերբնական»<sup>8</sup>, Գերբնական իդեալի մեջ մարդը մարմնավորել է կատարյալի, բացարձակ գեղեցիկի, բացարձակ բարու, բացարձակ ծշմարիտի, բացարձակ արդարության իր պատկերացումը։ Բայց կրոնի իդեալը, և Ֆոյերբախի խոսքերով ասած, «վերացական, ամորձատված, մարմնագուրկ էակն է», մինչդեռ աթեթզմի իդեալը «ամրողական, իրական, համակողմանի, կատարյալ զարգացած մարդն է»<sup>9</sup>: Գիտական աշխարհայացքում իդեալը, որը և է՝ սոցիալիզմի ու կոմունիզմի իդեալը, մարմնապես և հոգեպես ներդաշնակ զարգացած, ինքնաճանաշման հասած կոնկրետ մարդն է, նրա մարդկային էությանը համապատասխանող հասարակական հարաբերությունների ձևավորումը։ Այդ առթիվ Ֆ. Էնգելսը գրել է. «Մարդը պետք է լոկ ճանաչի ինքն իրեն, իրեն դարձնի բոլոր կենսական հարաբերությունների շափանիշ, դրանց գնահատական տա իր էության համեմատ, աշխարհը կառուցի իսկական մարդկայնորեն՝ իր բնության պահանջների համաձայն...»<sup>10</sup>, Զարգացման նման մակարդակի հնարավոր է հասնել միայն հասարակական հարաբերությունները, կյանքը արդարության և հավասարության սկզբունքների համաձայն կառուցելու միջոցով, երբ սոցիալական կյանքի կազմակերպումն ամբողջապես նպատակամղված կլինիանհատի բանական պահանջմունքների բավարարմանը, նրա ընդունակությունների և հոգեսր ուժերի առավել բացահայտմանն ու օբյեկտիվացմանը։

Աթեթզմն ունի նաև համազգային, ինտերնացիոնալ արժեքը։ Կրոնը մարդկանց բաժանում է ըստ դավանանքի ու կրոնական պատկանելության, դրանվ իսկ պատնեշում է ազգերի ու ժողովուրդների միջև փոխադարձ մերձեցումն ու բարեկամությունը, արգելակում համամարդկային գիտակցության ձևավորումը։ Կրոնը ազգայնամոլության, ժողովրդի բացառիկության, աստվածքների է։ Պատմությունը վկայում է, որ կրոնական տարրերությունները հաճախ պատճառ են դարձել ազգամիջան և ներազային թշնամության, կոտորածների և պատերազմների։ Աթեթզմն ընդհակառակը, իր ուսմունքը կառուցում է համամարդկային արժեքների, համազգային շահերի ու ընդհանրությունների վրա։ Նրան խորթ է ազգային թշնամանքն ու սահմանափակությունը, բոլոր մարդիկ հավասար են՝ անկախ ազգային, ոսասակարգային, սեռային, ուսուայական և կրոնական պատկանելությունից։ Իր այս սկզբունքով աթեթզմը նպաստել է ժողովուրդների փոխրմբում մարդության միասնության գիտակցության ձևավորմանը, ազգային սնակառության գիտակցության հաղթահարմանը, իսկական հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի դաստիարակմանը։

Մարքս-լենինյան աթեթզմի կենսահաստատ էության դրսեորումներից է նաև ապագայի հանդեպ լայմատեսական մոտեցումը։ Եթե կրոնը իմաստադոկում է պատմական ռարդացման ընթացոր, գրիում մարդուն ապագայի իդուական գիտակցությունից, մառոկության պատմությանը հաղորդում միստիկական բովանդակություն, ապա աթեթզմը պահանջում է «պատմության մեջ տեսնել ոչ թե «ասատուծո», այլ մարդու, և միայն մարդու հայտնություն»<sup>11</sup>,

Գիտական աշխարհայացքը ներթափանցված է պատմական լավատեսու-

<sup>8</sup> Վ. Ի. Լենին, Ծլժ, 4, 29, էջ 67.

<sup>9</sup> Л. Фейербах. Избранные философские произведения, т. 2.. М., 1955. стр. 778.

<sup>10</sup> Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Վ. Ի. Լենին, Կրոնի մասին, էջ 485.

<sup>11</sup> Խոլին տեղամամբ, էջ 484:

թյամբ, որը դաստիարակում է անսասան հավատ մարդու բանականության, բարու, ճշմարիտի և արդարության հաղթանակի հանդեպ:

Ապագայի գիտական ըմբռնումը, ենելով հասարակական զարգացման օրենքների ճանաշողությունից, մատնանշում է գալիքը ուսալ կանխատեսելու և գիտակցարար կերտելու ուղին, պահանջում է ակտիվ, հեղափոխական պայքար մղել սոցիալական շարի, ճնշման, անարդար հասարակական հարաբերությունների գեմ, որոնք սնում ու պահպանում են հետադեմ, մտացածին, կեղծ գաղափարներ:

Մարդու-լենինյան աթեիստական աշխարհայացքի կենսահաստատ էության զարգացման ու ծավալման առումով մեծ հնարավորություններ է թաքցնում իր մեջ սոցիալական արդարությունը: Ընդհանրապես, արդարության՝ որպես մարդու սոցիալ-քարոյական կարեռ պահանջմունքի, բավարարման աստիճանով է շափում տվյալ հասարակարգի մարդասիրական բնույթը: Դրա համար էլ կուսակցությունը կարևորում է հասարակական արդար հարաբերությունների հաստատման, այսինքն՝ սոցիալիզմի իրական, գործնական գարգացման գաղափարը՝ որպես կայուն գիտական աշխարհայացք ձևավորելու նախադրյալ:

Իհարկե, որպեսզի աթեիզմի, սոցիալիզմի գաղափարները վերածվեն համոզունքի, դառնան գործունեության շարժառիթ, այսինքն՝ ապացուցեն իրենց այսկողմնային լինելը, բավական չէ դրանց լայն պրոպագանդան, անհրաժեշտ է նաև ստեղծել դրանց կենսունակությունն ու ճշմարտացիությունը գործնականում վավերացնող պայմանները, քանզի «գաղափարները, որքան էլ հրապուրի լինեն, ինքնին ավտոմատ կերպով ամրողական ու ակտիվ աշխարհայացքը դեռևս շեն ձևավորվում, եթե շաղկապված շեն մասսաների սոցիալ-քաղաքական փորձի հետ»<sup>12</sup>:

Մեր հասարակարգի վերակառուցումը, սոցիալ-քաղաքական, հոգևոր մթնոլորտի առողջացումն ինքնին բարերար ազդեցություն կունենա մարդկանց աշխարհայացքային կողմնորոշման վրա՝ ուժեղացնելով սոցիալիստական գաղափարների ու իդեալների ձգողական ուժը, բարձրացնելով նրա գիտաթեիստական արժեքների հեղինակությունը:

Այսպիսով, մարքու-լենինյան աթեիզմը աշխարհայացքային ուսմունք է, որը աստուծու մերժման միջոցով հաստատում է մարդուն, կրոնական երեակայական արժեքները փոխարինում է կյանքի իրական արժեքների գիտակցությամբ, ձևավորում է իրատեսական հայացք աշխարհի և մարդու մասին, դաստիարակում է հավատ դեպի մարդն ու նրա բանականությունը:

**Г. А. Ароян—Гуманистический характер марксистско-ленинского атеизма.**—В нынешних условиях переоценки ценностей, плюрализма мнений выяснение жизнеутверждающего позитивного характера марксистско-ленинского атеизма приобретает важное мировоззренческое и воспитательное значение. Социально-нравственная ценность атеизма состоит в том, что основной вопрос человеческого бытия—соотношение сущности и существования—решается им в конкретном диалектическом единстве, т. е. в пользу сущностного существования, тем самым способствует осознанию человеком своей истинной социально-природной роли, гуманизации общественных отношений, утверждению человека как самоцели и высшей ценности исторического процесса.